

Հաստատված է  
Երևանի պետական համալսարանի  
գիտական խորհրդի 2007թ. դեկտեմբերի 27-ի թիվ 4-07/08

նիստի որոշմամբ

ԵՊՀ ԳԻՏ ՄԱԽԱԳԱԽ, Ռեկտոր

Ա. Յ. Սիմոնյան

27 դեկտեմբերի 2007թ.

Երևանի պետական համալսարանի  
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան  
գրադարանի զարգացման  
հայեցակարգ

Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի զարգացման հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) հիմնական նպատակն է ամրագրելու գրադարանային համակարգի կայացման համար հրատապ նշանակություն ունեցող խնդիրների հետևողականորեն լուծման ընթացակարգերը՝ այդպիսով նախապայմաններ ստեղծելով գրադարանային ենթակառուցվածքների հավասարաչափ զարգացման ու դրանց գործառույթների ներդաշնակեցման համար: Հայեցակարգը հնարավորություն կտա կատարվող գործողությունների համատեքստում կանոնակարգելու միջազգային ու եվրոպական չափանիշներին համահունչ գրադարանային ոլորտի կայացման հիմնական առաջնությունները և դրանց իրականացման հաջորդականությունը: Հայեցակարգն իրատեսական է և ենթադրում է գործողությունների իրականացման կոնկրետ ժամանակահատվածներ, որտեղ հաշվի են առնված գրադարանի անցյալ ու ներկա

կառուցվածքային-գործառնական հնարավորությունները՝ ապահովելով դեպի ապագան միտված դրանց հավանական զարգացումը: Հայեցակարգից բխող գործողությունների իրականացման արդյունավետության գնահատման համար որպես չափանիշ դիտարկված է համապատասխանությունը միջազգային և եվրոպական գրադարանային ենթակառուցվածքների զարգացման առաջատար փորձին: Հայեցակարգը Երևանի պետական համալսարանի գիտակրթական համակարգի զարգացմանը միտված հայեցակարգերի բաղադրիչներից մեկն է և կոչված է ապահովելու գիտակրթական համակարգի առջև դրված խնդիրները:

Գրադարանը հայեցակարգը իրականացնելու է համագործակցելով «Իզմիրլյան» հիմնադրամի և ԵՊՀ գիտակրթական համակարգի մյուս ստորաբաժանումների հետ:

**1. Գրադարանի ենթակառուցվածքների արդիականացումը՝ որպես գիտակրթական համակարգի զարգացման երաշխիք**

Համալսարանական գիտակրթական համակարգը 1991թ.-ից սկսել է բարեփոխումների գործընթացը, որոնց համատեքստում հրատապ է դարձել միջազգային չափանիշներին համահունչ գրադարանային ենթակառուցվածքների արդյունավետ գործունեությունը, որը կարող է առանցքային նշանակություն ունենալ որակյալ և մրցունակ գիտակրթական համակարգի կայացմանը:

ԵՊՀ գրադարանը ձևավորվել է XX դարի 20-ական թվականներին<sup>1</sup>, Խորհրդային Միության տարիներին<sup>2</sup>: Տեղեկատվության հիմնական աղբյուրները բավականին երկար ժամանակ թղթային քարտարաններն էին և կրիչները: Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման շնորհիվ միջազգային և եվրոպական գրադարանները կարողացան իրականացնել գրադարանային պաշարների թվայնացման ու էլեկտրոնայնացման գործընթացը, որն էլ հնարավորություն ստեղծեց բարձրացնել արդյունավետության աստիճանը, ինչի արդյունքում այդ գրադարանները թևակոխեցին զարգացման նոր մակարդակ, որոնց գործունեության համար առանցքային դարձան

<sup>1</sup> Այդ մասին տես Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը: Ուղեցույց (Խմբ. Ռ.Ա. Իշխանյան), Եր., Երևանի համալս. հրատ., 1983, էջ 3-5:

<sup>2</sup> Գրադարանը կազմավորվել է համալսարանի հիմնադրման հետ միաժամանակ՝ Երևանի ուսուցչական սեմինարիայի գրադարանի ֆոնդի հիման վրա, սակայն միայն 1922թ. նոյեմբերին է իր դռները բացել ընթերցողների առջև: Գրադարանի ֆոնդը 1921թ. կազմում էր 25000, 1927թ.՝ 52000, իսկ 1982թ.՝ 1606046 կտոր (Տե՛ս Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը: Ուղեցույց, էջ 3-5):

շարժունակության, հրատապ տեղեկատվության ապահովման և հաղորդակցման անսահմանափակ հնարավորության (հաղորդակցում առանց սահմանների) սկզբունքները: Այդպիսով, գրադարանները դադարեցին լինել միայն գրականության պաշարների համալրման ու պահպանման հաստատություններ: Ժամանակակից եվրոպական գրադարանները գիտակրթական գործընթացի և հաղորդակցման տեղեկատվական միջավայրի առանցքային կազմակերպիչներ են:

2006թ. կատարված կառուցվածքային-գործառնական բարեփոխումներից հետո մեր գրադարանը այժմ ունի հետևյալ ենթակառուցվածքները՝

- *Գրականության և մամուլի սպասարկման բաժին*, որի մեջ մտնում են հասարակական, ճշգրիտ և բնական գիտությունների ընթերցասրահներն ու գիտական կաբինետները,
- *Գրապահոցի բաժին*, որն իրականացնում է գրականության սպասարկում, պահպանում և վերականգնում,
- *Արձևեմենտի բաժին*, որն իրականացնում է ընթերցողների գրանցում և տացք, ընթերցողական տոմսերի պատրաստում և տրամադրում, գրականության սպասարկում, միջգրադարանային բաժնույթ,
- *Չամալրման և մշակման բաժին*, որն իրականացնում է գրականության համալրում, հաշվառում, փոխանակում, նվիրատվություն և պահեստավորում, նոր ստացված գրականության մուտքագրում,
- *Չնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժին*, որն իրականացնում է հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության պահպանում ու սպասարկում, ինչպես նաև մատենագիտական աշխատանքներ,
- *Չամակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժին*, որն իրականացնում է հայաստանյան գրադարանների գրապաշարի մատենագիտական տեղեկատուի ստեղծման, էլեկտրոնային համահավաք գրացուցակի կազման<sup>2</sup>, միջգրադարանային համահավաք քարտարանի ծրագրային և էլեկտրոնային սպասարկման ապահովման, գրականության մուտքագրման, գրադարանային գործընթացների էլեկտրոնայնացման, գրականության պաշարների թվայնացման աշխատանքներ:

2006թ. գրադարանում կատարված բարեփոխումների շնորհիվ հնարավոր դարձավ հստակորեն սահմանազատել բաժինների գործառույթները:

<sup>2</sup>Տե՛ս ինտերնետային կայքերը՝ <http://www.armunicat.am:8991/ALEPH>, <http://www.rmunicat.am:8991/ARMA>:

1990-ական թվականներից հետո 2006թ. առաջին անգամ կատարվեց գրադարանի ենթակառուցվածքային ստորաբաժանումների խնդիրների, գրադարանավարների մասնագիտական պատրաստվածության վերանայման ու նոր առաջադրանքների ձևակերպման աշխատանքներ: Վերամիավորվեցին երեք բաժիններ: Այդ խնդիրների լուծման համատեքստում առանցքային նշանակություն կունենա արդիականացման և էլեկտրոնայնացման աշխատանքները, որոնց իրականացմանը պետք է մասնակցեն բոլոր բաժինները:

Գրադարանային գործընթացների էլեկտրոնայնացման ուղղությամբ հատկապես կարևոր նշանակություն ունեցավ գրադարանում 1995թ. Ավտոմատացման և տեղեկատվության բաժնի կազմավորումը, որի աշխատանքների իրականացմանը 1995-1996թթ. զգալի օժանդակություն ցուցաբերեց «Իզմիրյան» հիմնադրամը<sup>1</sup>: Նույն թվականից գրադարանին եռամյա ժամկետում զգալի աջակցություն ցուցաբերվեց նաև Բեռլինի գրադարանային ինստիտուտի (Գերմանիա) և Ռոստոկի համալսարանի գրադարանի (Գերմանիա) կողմից<sup>2</sup>: Հետագայում «Իզմիրյան» հիմնադրամը (2001թ.) աջակցության նոր նախաձեռնությամբ հանդես եկավ արդեն Բաց հասարակության ինստիտուտ հիմնադրամի հետ միասին, որոնց աջակցությամբ հնարավոր դարձավ գրադարանի էլեկտրոնայնացման գործընթացի շարունակականության ապահովումը: Չնայած ցուցաբերված զգալի աջակցությանը՝ գրադարանի արդիականացման գործընթացը սահմանափակվեց միայն գրականության մուտքագրման աշխատանքներով, որի հիմնական պատճառը գրադարանի համակազմի պատրաստվածության ոչ պատշաճ մակարդակն էր: Ասվածի վկայությունն է նաև այն հանգամանքը, որ, չնայած 1994թ. հոկտեմբերին գրադարանն ունեցավ առանձին նոր մասնաշենք, սակայն տարածքների զգալի մասը անարդյունավետ էր օգտագործվում՝ գրականության պաշարներն ամբողջությամբ թողնելով նախկին պայմաններում: Մինչև 2006թ. ընթերցասրահներում և գիտական կաբինետներում էր գտնվում շուրջ 30 հազար միավոր գրականություն և 110 հազար ամսագիր, որոնց զգալի մասը արդիականությունը կորցրել էր: Իսկ դա այն դեպքում, երբ մեծ պահանջարկ ունեցող արվեստի, հնատիպ գրականության պաշարների զգալի մասը գրադարանի ստեղծման ժամանակից ի վեր մնում էին գրապահոցի

<sup>1</sup>1995թ. շվեյցարահայ բարերար Տիգրան Իզմիրյանը գրադարանի տեխնիկական վերանորոգման և աշխատատար գործընթացների արդիականացման նպատակով նվիրաբերել է 1 միլիոն ԱՄՆ դոլար (Այդ մասին տես «Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան ցիտական գրադարանը», Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 7):

<sup>2</sup>1996թ. Բեռլինի գրադարանային ինստիտուտի աջակցության ծրագրով ԵՊՀ գրադարանին տրվում է 150 հազար գերմանական մարկի դրամական օժանդակություն՝ եռամյա ժամկետում (1996-1999թթ.) անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, Ռոստոկի համալսարանի գրադարանի հետ աշխատանքային փոխայցելությունների կազմակերպման նպատակով (Այդ մասին տես «Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գիտական գրադարանը», էջ 8):

նկուղներում, որի պատճառով էլ վնասվեցին, և այժմ արդեն անհնար է դարձել նույնիսկ դրանց վերականգնումը:

2006-2007թթ. ժամանակահատվածում ընթերցասրահներում և գիտական կաբինետներում, հնատիպ և հազվագյուտ գրականության բաժնում գրականության պաշարների առկա ֆոնդերն ամբողջովին վերանայվեցին, փոփոխվեցին և համալրվեցին նորերով: Ընդհանուր առմամբ ավելացվել է 35 հազար միավոր գրականություն և 57 հազար միավոր գիտական ամսագիր: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ արվեստի վերաբերյալ գրականության հիմնական մասը գրապահոցից տեղափոխվեց հնատիպ և հազվագյուտ գրականության բաժին: Այն շուրջ 50 տարի չի սպասարկվել՝ համարվելով փակ ֆոնդ, որի պատճառով որոշ մասը վնասվել է:

- **Գրականության և մամուլի սպասարկման բաժին:** Բաժնի կազմի մեջ են մտնում հասարակական, բանասիրության, ճշգրիտ և բնական գիտությունների ընթերցասրահներն ու գիտական կաբինետները: Բաժնի հիմնական գործառույթն է ընթերցողներին ապահովել ուսումնական ծրագրերին համապատասխան անհրաժեշտ գրականությամբ, հանդեսներով, պարբերականներով, ինչպես նաև ընթերցողների պատվերների դեպքում՝ սպասարկել գրապահոցի պաշարներից ատենախոսություններ, ամսագրեր, պարբերականներ և մեկ օրինակ գրականություն: Յուրաքանչյուր ընթերցասրահի և գիտական կաբինետի առձեռն գրականության պաշարները ձևավորված են տվյալ գիտական բնագավառի համապատասխան գրականությամբ, որոնք անընդհատ համալրվում են նոր ստացվածներով: Հասարակական գիտությունների գիտական կաբինետում գործում են նաև ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի փաստաթղթերի հավաքածուները: Այս բաժնի գրականության պաշարները պետք է շարունակել համալրել դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, հանրագիտարաններով, բառարաններով, ինչպես նաև դասախոսությունների նյութերով: Համագործակցելով համալսարանական համապատասխան ստորաբաժանումների հետ՝ յուրաքանչյուր ընթերցասրահում պետք է ստեղծել տվյալ ուսումնական կիսամյակում դասավանդվող դասընթացների դասախոսությունների նյութերի և հանձնարարվող գրականության հավաքածուներ, որոնք պետք է տրամադրվեն համապատասխան ամբիոնների կողմից: Դա հնարավորություն կտա ընթերցասրահներում ստեղծել «կիսամյակային ապարատ», իսկ ընթերցողներին՝ առձեռն ունենալ բոլոր անհրաժեշտ նյութերը:

Անհրաժեշտ է ընթերցասրահների և գիտական կաբինետների տարածքներն արդյունավետ օգտագործել, որի համար էլ հրատապ են դառնում բավարար

քանակությամբ գրապահարանների ձեռքբերումը և գիտական կաբինետների տարածքում միջնորմների վերացումը: Միջնորմները զգալիորեն սահմանափակում են բնականոն աշխատանքային պայմանների ապահովման գործընթացը, իսկ առանձնացված «սենյակներում» պարզապես հնարավոր չէ իրականացնել մեծաքանակ գրականության սպասարկման և առձեռն ֆոնդերի ստեղծման աշխատանքներ: Բարեփոխումները հնարավորություն կտան տվյալ բաժնի երեք գիտական կաբինետներից յուրաքանչյուրում առձեռն գրականության պաշարները ավելացնել շուրջ 60 հազար միավորով, որի շնորհիվ կազատվեն հին գրապահոցի նկուղային հարկերը, ինչպես նաև ընթերցողների համար կստեղծեն բարենպաստ պայմաններ ինքնասպասարկման եղանակով՝ առանց միջնորդավորվածության, ունենալ անհրաժեշտ քանակությամբ գրականություն, պարբերականներ և այլն: Ընդ որում, վերակազմավորումների շնորհիվ կապահովվի նաև առձեռն ֆոնդերի էլեկտրոնային սպասարկման և պատվերների իրականացման աշխատանքներ:

Կատարվող բարեփոխումների համատեքստում հրատապ նշանակություն ունեն քննարկումների համար հատկացված տարածքների ավելացումը, ընթերցասրահներում և գիտկաբինետներում անհրաժեշտ քանակությամբ համակարգիչների, տպիչների, սկաներների, իսկ հարակից տարածքներում նաև պատճենահանող սարքերի ապահովումը:

- **Գրապահոցի բաժին**, որն իրականացնում է գրականության սպասարկում, պահպանում և վերականգնում: Բաժնի գրականության պաշարները տեղակայված են չորս հարկերում, որոնցից երկուսը՝ ներկայիս մասնաշենքի 1-ինում և 2-րդում, իսկ մյուս երկուսը՝ կետրոնական մասնաշենքի նկուղային հարկերում: 2007թ. բաժնի ուսումնական գրապաշարների հիման վրա ստեղծվեց առձեռն դասագրքային ֆոնդ, որտեղ տեղադրվեց շուրջ 80 հազար միավոր գրականություն: Անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել գրապահոցի դասագրքային, արվեստի և գեղարվեստական գրականության պաշարներից առձեռն ֆոնդերի ձևավորման աշխատանքները, որոնք կհամալրվեն մյուս բաժիններում գտնվող համապատասխան գրականության պաշարները: Դա նաև հնարավորություն կտա գրապահոցի գրականության պաշարները աստիճանաբար տեղափոխել նոր գրապահոցի հատված: Դրա համար պետք է ձեռք բերվեն մետաղական գրապահարաններ: Միաժամանակ պետք է իրականացնել գրապահոցի պատուհանների, օդափոխման, ջերմամատակարարման, հակահրդեհային համակարգերի վերանորոգման աշխատանքներ: Այս

համատեքստում առանցքային նշանակություն ունեն նոր գրապահոցի հատվածում աշխատասենյակների ձևավորումը, գրապահոցի աշխատատար գործընթացների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը, որոնք հնարավորություն կտան ընթերցողների պատվերները ստանալ անմիջապես գրապահոցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրապահոցի գրականության պաշարը հասնում է շուրջ 2 միլիոնի, որը պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ, անհրաժեշտ է վերանայել արդիականությունը կորցրած գրականությունը: Այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է համագործակցել բոլոր ֆակուլտետների հետ՝ ներգրավելով մասնագետներ համապատասխան ամբիոններից, որոնց մասնագիտական եզրակացությունների հիման վրա կիրականացվեն գրականության պաշարների պարբերաբար վերանայման աշխատանքներ:

- **Արժեքների բաժինի** հիմնական գործառույթներն են ընթերցողների գրանցումը և տացքը, ընթերցողական տոմսերի պատրաստումը և տրամադրումը, գրականության սպասարկումը, միջգրադարանային բաժնույթի իրականացումը: Նշված գործառույթների իրականացումը չի փոխվել գրադարանի հիմնադրումից ի վեր, այնինչ առաջատար գրադարանային համակարգ ունեցող երկրներում վաղուց արդեն դրանք իրականացնում են գրապաշարների էլեկտրոնային շրջանառության գործառույթների միջոցով: Անհրաժեշտ է բարձրացնել ընթերցողական տոմսերի և քարտերի պաշտպանվածության աստիճանը, որտեղ կլինեն ընթերցողի ինքնությունն արձանագրող անհրաժեշտ տեղեկություններ՝ օգտվողին տրամադրելով նաև անուն և գաղտնաբառ: Դա հնարավորություն կտա գրականության շրջանառու սպասարկումը կատարելու միայն էլեկտրոնային եղանակով՝ գրականության պաշարները դարձնելով հասանելի նաև գրադարանից դուրս: Անհրաժեշտ է իրականացվող գործառույթների համատեքստում ստեղծել նաև միջգրադարանային սպասարկման միացյալ համակարգ: Դա հնարավորություն կտա այլ գրադարանների ընթերցողներին կատարելու սպասարկման պաշարներում առկա ցանկացած նյութի պատվեր:
- **Համայրման և մշակման բաժին**, որն իրականացնում է գրականության համալրում, հաշվառում, փոխանակում, նվիրատվություն և պահեստավորում, նոր ստացված գրականության մուտքագրում: Նմանատիպ աշխատանքների իրականացումը գրադարանային մյուս ենթակառուցվածքների համար ունի ռազմավարական նշանակություն, որովհետև բոլոր ստորաբաժանումների

արդունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է նոր գրականության պաշարների հետևողական համալրումից: Բաժնի գործառույթները վերանայվել են, իսկ բաժինը վերակազմավորվել է 2006թ.-ին, որի շնորհիվ հստակեցվել են աշխատատար գործընթացների կատարման հիմնական ուղղությունները: Դրա շնորհիվ գրականության համալրման գործընթացը կատարվում է միայն համապատասխան ֆակուլտետների և ամբիոնների կողմից ներկայացված պատվերների հիման վրա: Միաժամանակ կազմվում է նաև հրատապ գրականության և ամսագրերի ցանկ՝ մշակելով դրանց ձեռքբերման հնարավոր ընթացակարգերը:

- **Հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժին**, որն իրականացնում է հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության պահպանում ու սպասարկում, ինչպես նաև մատենագիտական աշխատանքներ: Բաժնի գրապաշարը մինչև 2006թ. կազմում էր շուրջ 26 հազար միավոր գրականություն, իսկ 2006-2007թթ. ընթացքում այն ավելացավ շուրջ 6 հազարով: Բաժնի գործունեության համար կարևորվում է առկա հնատիպ գրականության պաշարների մուտքագրման և թվայնացման գործընթացը՝ սպասարկումը էլեկտրոնային տարբերակներով իրականացնելու նպատակով: Անհրաժեշտ է շարունակել գրացուցակների արդիականացման և հեղինակավոր գրառումների գործընթացի իրականացումը: Այդ խնդրների իրականացման ընթացքում բաժինը պետք է համագործակցի հատկապես գրադարանի համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժնի հետ, ինչը հնարավորություն կտա էլեկտրոնային քարտարանը պարբերաբար համալրել մատենագիտական տեղեկատվությամբ՝ այն դարձնելով նաև էլեկտրոնային մատենագիտական քարտարան: Դա հնարավորություն կտա սպասարկել ընթերցողներին՝ չվնասելով հնատիպ գրքերը: Ներկայումս հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության սպասարկումն իրականացվում է կենտրոնացված սպասարկման եղանակով:

Բաժնի գրապաշարները պահպանելու համար անհրաժեշտ են անվտանգության, ջերմային ռեժիմի և օդափոխության պատշաճ պայմաններ:

- **Համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժին**, որն իրականացնում է հայաստանյան գրադարանների գրապաշարի մատենագիտական տեղեկատուի ստեղծման, էլեկտրոնային համահավաք գրացուցակի կազմման, միջգրադարանային համահավաք քարտարանի ծրագրային ապահովման, գրականության մուտքագրման, գրադարանային գործընթացների էլեկտրոնայնացման, գրականության պաշարների թվայնացման



աշխատանքներ: Նշված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նաև դրանք աստիճանաբար փոխանցել համապատասխան բաժիններին՝ միաժամանակ լուծելով էլեկտրոնային վերահսկման և ծրագրային ապահովման խնդիրները: Այժմ համապատասխան մասնագետների բացակայության պատճառով բաժինն իրականացնում է այլ բաժինների հետ կապված բազմաբնույթ համակարգչային գործառույթները: Լիազորությունների վերաբաշխումը հնարավորություն կտա ունենալու հավասարակշռված և փոխադարձ վերահսկելի էլեկտրոնային միջավայր: Հաշվի առնելով «առանց միջնորդավորվածության» սպասարկման և մեծ պահանջարկ ունեցող գրականության առցանց ունենալու կարևորությունը՝ բաժինը պետք է ստեղծի հասանելի էլեկտրոնային միջավայր, ներքին ցանց և այդ ցանցի շրջանակներում հաղորդակցման հնարավորություն՝ զուգահեռաբար իրականացնելով գրականության թվայնացման աշխատանքներ: Այդ աշխատանքները և թվային պատրաստվածության պատշաճ աստիճանն անհրաժեշտ նախապայմաններ կստեղծեն հեռուսուցման և էլեկտրոնային ուսուցման իրականացման համար՝ այդպիսով նպաստելով «բաց կրթական համակարգի» զարգացմանը, յուրաքանչյուրին հնարավորություն տալով օգտվելու իր հետաքրքրությունների շրջանակում:

## *2. Գրականության շտեմարանները՝ որպես էլեկտրոնային ուսուցման և հեռուսուցման համակարգեր*

Արդի գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները ձևավորում են տեղեկատվական-հաղորդակցման այնպիսի համակարգ, որտեղ թվայնացված գրականության շտեմարանները հասանելի են ընթերցողներին՝ անկախ տարածաժամանակային իրավիճակից: Ստեղծված հաղորդակցական ընթացակարգերը և տեղեկատվական հնարավորությունները զարգացած համալսարաններին թույլ են տվել կազմակերպել առցանց կամ ցանցային կրթություն և ինքնակրթություն առանց սահմանների:

Հաշվի առնելով գրադարանային շտեմարանների, սպասարկող կայանների, սարքավորումների ու համապատասխան ծրագրերի առկա վիճակը՝ այժմ դրանք կարող են արդյունավետ նախապայմաններ ստեղծել հեռուսուցման համակարգի ներդրման

համար<sup>3</sup>: Միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել ներքին ցանց և այդտեղ պարբերաբար ավելացնել էլեկտրոնային տարերակով գրականության քանակը և իրականացնել առկա գրականության շտեմարանների թվայնացման աշխատանքներ: Գրականության շտեմարանների էլեկտրոնայնացումը ռազմավարական նշանակություն ունի գրադարանային համակարգի արդիականացման համար: Քանի որ էլեկտրոնային տարբերակով տեղադրելով տեղեկատվություն (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ամսագրեր, մենագրություններ)՝ գրադարանը կկարողանա բարենպաստ նախապայմաններ ստեղծել ուսուցման, ինքնաուսուցման և հեռուսուցման համար: Այս աշխատանքների իրականացման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել նաև դասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքներ՝ նրանց ուսուցանելով հեռուսուցման կազմակերպման եղանակները (համակարգիչների, ինտերնետային և սարքավորումների, ցանցային և առցանց, էլեկտրոնային փոստի և այլ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ): Ուսանողների համար նմանատիպ դասընթացների ուսուցանումը պետք է կատարվի հատուկ դասընթացների միջոցով՝ համագործակցելով համալսարանական համապատասխան ստորաբաժանումների հետ և հաշվի առնելով մասնագիտական կրթության առանձնահատկությունները:

### *3. Համակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու վերապատրաստումը*

Գրադարանային համակարգի զարգացման բաղադրիչներից է սպասարկող ներուժի պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու վերապատրաստման գործընթացը: Հասկանալի պատճառներով գրադարանավարներին ներկայացվող պահանջները զգալիորեն տարբերվում են, որը պայմանավորված է գրադարանային ստորաբաժանումների բազմաբնույթ գործառույթներով: Դրանք առանձնանում են նաև զարգացած սպասարկման համակարգ ունեցող գրադարանների համակազմերի առջև դրված խնդիրներից:

1995թ. սկսած՝ սպասարկման ընթացակարգերի համակարգչայնացումն արձատապես փոխեց համալսարանական գրադարանային համակարգի գործառույթների

<sup>3</sup> Այդ մասին տես ԵՊՀ գրադարանի կողմից ստեղծված «Մուդլ» հեռուսուցման համակարգը՝ <http://vle.lib.yzu.am/moodle/login/index.php>, ինչպես նաև «Դասընթացի պատրաստում Moodle համակարգում: Ուսուցչի ուղեցույց» (կազմող Լ. Ռ. Խաչատրյան): Եր., 2007 (Առաջին անգամ Հայաստանում «Մուդլ» ծրագրի շրջանակներում շուրջ 50 դասախոսների և ասպիրանտների հայերենով ուսուցանվել են հեռուսուցման ու այդ միջավայրում դասընթացի պատրաստման եղանակները):

իրականացումը: Գրադարանային համակարգում մարդկային ներուժի առումով անհրաժեշտություն դարձավ ցանցային ծրագրավորողների ու համակարգողների, համակարգչային տեխնիկայի մասնագետների ներգրավում, իսկ տեխնիկական վերազինման առումով՝ սերվերներ, համակարգիչներ, տպիչներ, սկաներներ, ինտերնետային կապ և էլեկտրոնային հաղորդակցման ապահովման այլ սարքավորումներ: Վերոհիշյալ խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է՝

ա/մշակել աշխատանքային պարտականությունների կատարման և վերահսկման արդյունավետ ընթացակարգեր,

բ/մշակել աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության և առաջընթացի գնահատման ու խրախուսման ճկուն համակարգ, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր տարի վերլուծելու որակավորման բարձրացման անհրաժեշտությունն ու աշխատանքային շարժառիթները,

գ/ստեղծել միջազգային փորձի փոխանակման և տեղայնացման նախապայմաններ, դ/տեխնիկական վերազինմանը զուգահեռ հետևողականորեն կատարել նաև համակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացման աշխատանքներ, ե/հետևողականորեն բարելավել համակազմի աշխատանքային պայմանները:

#### ***4. Միջգրադարանային համագործակցություն և անդամակցություն***

Գրադարանային համակարգի զարգացման համար առանցքային նշանակություն ունի ներպետական և միջազգային համագործակցությունը, ինչը անհրաժեշտ նախապայման է առաջատար գրադարանային փորձի ներդրման և կիրառման համար: Միջազգային համագործակցությանը զուգահեռ միաժամանակ կարևոր է նաև ներպետական համագործակցությունը, որովհետև առանց կայացած ազգային գրադարանային համակարգի հնարավոր չէ ապահովել արդյունավետ միջազգային համագործակցության մակարդակ: Այս առումով ԵՊՀ գրադարանի համար կարևոր է և՛ միջազգային, և՛ ներպետական մակարդակում գրադարանային միավորումների հետ փոխշահավետ համագործակցությունը: Հատկապես ռազմավարական նշանակություն ունի միջբուհական գրադարանային համակարգերի ինտեգրումը, որը նախապայմաններ կստեղծի խնդիրների համատեղ լուծման համար: Դա բարեհաջող կարող է իրականացվել բուհական գրադարանային միավորում ստեղծելով, որը կնպաստի բուհական

գրադարանային ենթակառուցվածքների համագործակցության խորացմանը՝ լուծելով գիտակրթական համակարգում առկա բազմաթիվ խնդիրներ:

Գրադարանային միավորումների անդամությունը պետք է նպաստի գրադարանային ենթակառուցվածքների գործառնական արդյունավետության բարձրացմանը և համագործակցության միտված ծրագրերի իրականացմանը՝ համապատասխանելով համալասարանական կրթության զարգացման չափանիշներին:

##### *5. Համակարգչային պատրաստվածություն, անվտանգություն և շենքային պայմաններ*

Վերոհիշյալ խնդիրների լուծման համատեքստում հրատապ նշանակություն ունեն պատշաճ համակարգչային պատրաստվածությունը, տեխնիկական վերազինումը, գրադարանային շտեմարանների անվտանգությունը, արդիական հակահրդեհային համակարգը և շենքային պայմանները: Շենքային պայմանների բարելավման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի նաև բավարար լուսավորության ապահովումը, որը հնարավոր կդառնա գրադարանի տանիքը ապակեպատ դարձնելու, ինչպես նաև արդիական լուսավորության համակարգ տեղադրելու շնորհիվ: Կարևոր է նաև գրադարանի ճեմասրահներում ընթերցողների իրերի համար նախատեսված փոքր պահախցերի տեղադրումը, որը կապահովի գրադարանի ֆողերի և գույքի անվտանգությունը:

Տեղեկատվության, մուտքագրված և թվայնացված գրականության շտեմարանների պահպանումը, ինչպես նաև արխիվացումն ու տարածումը պետք է դառնան գրադարանի հաղորդակցական հնարավորությունների զարգացման հենքը: Առանց գրադարանային ենթակառուցվածքների աշխատատար գործառույթների անվտանգության ապահովման հնարավոր չէ իրականացնել ընթերցողների արդյունավետ սպասարկում և գրականության պաշարների պահպանում: Այդ նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունի ընթերցողների էլեկտրոնային քարտերի, տոմսերի, գաղտնաբառերի և օգտվողների անունների առկայությունը, որոնք հնարավորություն կտան վերահսկելու ընթերցողների մուտքը և ելքը էլեկտրոնային քարտարան ու գրադարանային թվայնացված շտեմարաններ: Դա իր հերթին հնարավորություն կտա գրադարանային կառուցվածքային գործառույթների հետագա ընդլայնմանը՝ զուգահեռ մատուցելով որակյալ և պաշտպանված ծառայություններ: Միաժամանակ անհրաժեշտ է բոլոր ընթերցասրահներում և գիտական կաբինետներում ունենալ համակարգիչներ,

տպիչներ և սկաներներ՝ ընձեռնելով պատշաճ աշխատանքային պայմաններ գիտական աշխատանքների կատարման, ուսուցման ու ինքնուսուցման համար:

Շենքային պայմանների ապահովումը ենթադրում է օդափոխման, ջեռուցման, լուսավորության, կայուն ջերմաստիճանի առկայություն, ինչպես նաև ընթերցասրահների ու գիտկաթիմետների տարածքների արդիականացում: Ինչը, ինչպես արդեն նշել ենք, հնարավորություն կտա գրապահոցի նկուղային հարկերից շուրջ 200 հազար միավոր հրատապ և մեծ պահանջարկ ունեցող գրականություն, ատենախոսություններ, ամսագրեր, պարբերականներ տեղադրել համապատասխան ընթերցասրահներում: Միայն այդ դեպքում է հնարավոր իրականացնել պահանջվող նյութի սպասարկում «բաց գրադարակների սկզբունքով»՝ ինքնասպասարկմամբ: Միաժամանակ անհրաժեշտ է ինքնաաշխատ արձագանքման սարքերով վերահսկելի դարձնել գրքերի շրջանառությունը և գրադարանի շենքի, ընթերցասրահների, գիտկաթիմետների մուտքերը ու ելքերը, որոնց հարակից տարածքներում կտեղադրվեն պահախցեր: Այդ պայմանների ապահովման դեպքում գրադարանի տարածքների վերահսկողության գործառույթները կիրականացնեն սպասարկման բաժնի աշխատակիցները: